# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՎԻՈԼԱ ՍՊԸ-ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/36 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Microplate Reader | MB-580 | MB-580 | Huisong Technology Development Co., Ltd | Օպտիկական խտության չափման միջակայքը` 0–4,5 OD: Օպտիկական խտության չափման զգայունությունը` 0,001 OD: Օպտիկական խտության չափման գծայնությունը`+/- 0,5% կամ < 0,025 OD: Օպտիկական խտության չափման կրկնելիություն` < 0,1% կամ 0,0025 OD: Օպտիկական խտության չափման միջուղիանի տարբերությունը` < 0,01 OD: Օպտիկական համակարգի տեսակը` նվազագույնը 8 ուղիանի օպտիկա, խորշիկների դիրքի ավտոմատ կենտրոնացում օպտիկայի ուղիների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նկատմամբ: Լամպը` վոլֆրամ-հալոգենային լամպ (6Վ, 10 Վտ), նվազագույնը 5,000 ժամ կյանքի միջին տևողությամբ, անգործության ժամանակ լամպի ավտոմատ անջատման ֆունկցիա: Չափման հնարավոր ալիքների երկարության միջակայքը` նվազագույնը 400-750նմ: Չափիչ ֆիլտրերի կրիչը` նվազագույնը 8 տեղանի: Չափիչ ֆիլտրերի քանակը և ալիքների երկարությունը` նվազագույնը 4 ֆիլտրեր` 405, 450, 492, 630նմ: Չափիչ ֆիլտրերի ինտերֆերենտ անցման շերտի լայնությունը` <12 նմ: Չափման մեթոդները` մոնոքրոմատիկ, բիքրոմատիկ, երկու կետային, դինամիկ, բազմաալիքային: Չափումների ֆոնային մակարդակի (blank) ընտրման հնարավորությունները` մեկ խորշիկի արժեքով, մի քանի խորշիկների միջին արժեքով, ողջ շարքի կամ սյունակի խորշիկների միջին արժեքով: Չափման արդյունքների մշակման մեթոդները` օպտիկական խտություն (ABS, %ABS), սահմանային արժեք (cut-off), մեկ կետանի ստուգաճշտում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | (single point calibration), գծային ռեգրեսիա (linear regression), կետից կետ ռեգրեսիա (point to point), էքսպոնենտային (exponent), լոգարիթմական (semi-Log, Log-Log), քառակուսի ֆունկցիա (quadratic curve = parabola), 4-պարամետրային ֆունկցիա (four-patameters function): Պլանշետի տեսակը՝ 96- և 48-խորշիկներով: Պլանշետի (96-խորշիկ) չափման տևողությունը՝ առավելագույնը 3վրկ մոնոքրոմատիկ չափման դեպքում և առավելագույնը 9վրկ բիքրոմատիկ չափման դեպքում: Պլանշետի չափման հնարավոր ուղղությունները՝ հորիզոնական և ուղղահայաց: Մեկ պլանշետի վրա տարբեր պարամետրերի (թեստերի) չափման հնարավորությունը՝ նվազագույնը 12 պարամետր: Օպտիկական համակարգի ստուգումը՝ առկա է, ավտոմատ, յուրաքանչյուր միացումից հետո: Մեխանիկական համակարգի ստուգումը՝ առկա է, ավտոմատ, սարքի յուրաքանչյուր միացումից հետո: Օպտիկական ուղիների և պլանշետները տեղափոխող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մեխանիզմի ծրագրային ստուգման և ստուգաճշտման հնարավորություն ըստ պահանջի: Չջնջվող հիշողությունը՝ նվազագույնը 300 թեստերի ծրագրեր, 100 000 չափման արդյունքներ: Սարքի կառավարումը՝ հպումային էկրանի, մկնիկի կամ ստեղնաշարի միջոցով: Էկրանը՝ հեղուկբյուրեղային (LCD) գունավոր հպումային, նվազագույնը 8 դյույմ անկյունագծով, ամբողջ պլանշետի չափման արդյունքների և ստուգաճշտման կորի ցուցադրման հնարավորությամբ: Ինտերֆեյսը՝ USB պորտեր, RS232 պորտ, ստեղնաշարի եւ մկնիկի միացման պորտեր: Էլեկտրասնուցումը՝ 12Վ (DC) հաստատուն լարում, 210Վ-240Վ փոփոխական լարման պայմաններում: Աշխատանքային միջավայրը՝ ջերմաստիճանը՝ 5-40°C, խոնավությունը՝ 10-90%: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հավաստագրեր՝ CE, ISO-9001, ISO-13485 հավաստագրերի առկայություն: Մատակարարը պետք է ապահովի սարքերի |

տեղադրումը, փորձարկումը, կարգաբերումը, լաբորատոր մասնագետների ուսուցումը գնորդի կողմից նշված հասցեում: Մատակարարը պետք է տրամադրի հավաստագիր իր կողմից սարքի առաջին շահագործման ամսաթվի վերաբերյալ: Նվազագույնը` 2 տարվա երաշխիքային սպասարկում տեղադրումից և ուսուցումից հետո: Մատակարարը պետք է ապահովի սարքի հետերաշխիքային սպասարկումը երաշխիքային ժամկետի ավարտից 3 տարիների ընթացքում:

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО «ВИОЛА» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/36 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |
| | | | | | |